

Ընտանեկան պլան արտակարգ իրավիճակների դեպքում. ուսուցում և վարժանքներ



Առնվազն տարին մեկ անգամ ընտանեկան հանդիպում կազմակերպեք՝ քննարկելու և թարմացնելու ձեր Ընտանեկան պլանը արտակարգ իրավիճակների դեպքում: Մա նաև լավ ժամանակ է՝ ստուգելու ձեր Արտակարգ իրավիճակների դեպքում անհրաժեշտ պարագաների հավաքածուի գույքագրումը: Ռոշեք՝ արդյոք անհրաժեշտ է լրացուցիչ ուսուցում, սարքավորումներ և պարագաներ: Փորձարկեք, փորձարկեք, փորձարկեք ձեր պլանը: Պրակտիկ վարժությունները կարող են բարելավել ձեր արձագանքման ժամանակը և օգնել խուսափել խուճապից իրական արտակարգ իրավիճակների ժամանակ:

Ա. Իմացեք, թե ինչպես և որտեղ անջատել կոմունալ ծառայությունները.

<input checked="" type="checkbox"/> Հիմնական ջրի փականի գտնվելու վայրը.
<input checked="" type="checkbox"/> Գազի փականի գտնվելու վայրը*.
<input checked="" type="checkbox"/> Պտուտակաբանալու գտնվելու վայրը.
<input checked="" type="checkbox"/> Էլեկտրական վահանակի/հիմնական անջատիչի գտնվելու վայրը.
<input checked="" type="checkbox"/> Ավտոտնակի դարպասների մեխանիկական կառավարման տեղակայումը.
<input checked="" type="checkbox"/> Այլ կոմունալ ծառայությունների սարքերի գտնվելու վայրը.

* Մի՛ անջատեք գազը, քանի դեռ չեք զգացել բնական գազի հոսքը, չեք լսել գազի արտահոսքի սվիցի ձայնը կամ չեք տեսել արտահոսքի այլ նշաններ:

Բ. Նկարեք ձեր տան հասակագիծը՝ ցույց տալով ելքի դռների և պատուհանների, կոմունալ ծառայությունների անջատման և Արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ պարագաների հավաքածուի տեղերը: Համոզվեք, որ ձեր տանը բոլորը ծանոթ են դրան: Ցույց տվեք դա դայակներին և տան հյուրերին:

Գ. Ստեղծեք երկու վերամիավորման վայր՝ ձեր ընտանիքի համար: Մեկը կլինի ձեր Թաղամասի հանդիպման վայրը, որը մոտ է տանը, ինչպես, օրինակ՝ փողոցի անկյունը կամ մոտակա այգին: Երկրորդը կլինի ձեր Տարհանման վայրը, տեղից հեռու ծանոթ մի վայր, որտեղ ձեր ընտանիքը կարող է վերամիավորվել, եթե չկարողանաք տուն վերադառնալ:

Դ. Ընտրեք քաղաքից դուրս մի կանտակտ, որի մասին տանը տեղյակ են բոլորը, որպեսզի գանգահարեն և հայտնեն իրենց գտնվելու վայրի և վիճակի մասին: Բոլորը պետք է մտապահեն այս հեռախոսահամարը կամ իրենց հետ վերցնեն այն՝ քարտի վրա գրված: Արտակարգ իրավիճակների ժամանակ տեղական հեռախոսագծերը կարող են կապված լինել շտապօգնության աշխատակիցների հետ:

Ե. Մտածեք Առաջին օգնության /CPR դասընթացներին հաճախելու մասին: Պահպանեք հավաստագրերը:

Զ. Համոզվեք, որ տանը բոլորը գիտեն, թե ինչպես անվտանգ գործարկել կրակմարիչը: Ուսուցողական տեսանյութերը հասանելի են առցանց՝ օգտագործելով ձեր ընտրած որոնման համակարգը:

Է. Կարևոր հեռախոսահամարներ՝

<input checked="" type="checkbox"/> Ոչ արտակարգ իրավիճակների հրշեջ վարչություն՝
<input checked="" type="checkbox"/> Ոչ արտակարգ իրավիճակների ոստիկանություն կամ շերիֆ՝
<input checked="" type="checkbox"/> Առաջնային խնամքի բժիշկ՝
<input checked="" type="checkbox"/> Գազի/Պրոպանի ընկերություն՝
<input checked="" type="checkbox"/> Էլեկտրամատակարարման ընկերություն՝
<input checked="" type="checkbox"/> Զրային ընկերություն՝
<input checked="" type="checkbox"/> Այլ կոմունալ ծառայություններ՝
<input checked="" type="checkbox"/> Թոյսի վերահսկողություն՝ 1-800-222-1222 — 24 ժամ, շաբաթը 7 օր՝ տարեկան 365 օր

ՕԳՏԱԳՈՐԾԵՔ «911»-ը՝ ՄԻՄՑՆ ԿՑԱՆՔԻՆ ՄՊԱՌՆԱՑՈՂ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ